

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Իկոն քիւ մեկ ծաւարով

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 Տոյս

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոթանալ տար

20 շաբաթ



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Ի ԱՄՆԵ ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇՅԱՐՔ

Հ Ա Ս Ց Ի

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրողները եւ

չեն տրոշիր

ՕՐՈՒՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՍՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Ա.

Օրուման բոլոր խնդիրներուն մէջէն՝ մերձագոյն Արեւելքի խնդիրն է որ տակաւին այսօր կը շարունակէ բարձրորդէն զբաղեցնել Եւրոպայի պաշտօնական Դիւանագիտութիւնն ու հրապարակագիրները։ Եւ տարբերութեամբ միայն որ՝ խնդիրը այժմ օղակաւ, ամբողջով, չոր խօսքերու կամ զրոյցներու վրայ ուղիղ չէ։ Դասաւարտագէտ Մակեդոնական խնդիրը այսօր պաշտօնական Եւրոպայի ցիւրքաւորութիւնը, Մակեդոնիոյ խնդիրն զրոյց ֆրանսական կառավարութեան կողմէ գիւսանագիտական Դիւանագիրք մը հրատարակութիւնը, — որ Մակեդոնիոյ մէջ թրքական հարստահարութեանց բացառական վաւերականութիւնը կը վկայէ, — վերջապէս Աւստրիոյ ու Ռուսիոյ կողմէ բարեկարգութեանց ծրագրի մը Բ. Դրան ներկայացուիլը Մակեդոնական տագնապին ազդեցութեամբ հանդիսաւորապէս նուիրապետուին։ Այդ նուիրապետութեամբ, անհրկբայ՝ ա՛րեւելի շնչեղ հանգամանք մը կընդունին՝ գրեթէ Եւրոպայի բոլոր մեծ խորհրդարաններուն մէջ այս առթիւ եղած կամ պատրաստուած քաղաքական հարցադրութիւններու հետեւանքովը։

Արդէն, Անգլիոյ խորհրդարանին ներկայ տարւոյ նստաշրջանին բացուելուն, Կահաճատին աւանդական վիճաբանութեանը միջոցին, ընդդիմադիր կուսակցութեան — ազատականներու — կողմէ այս մասին հարցումներու ու ակնարկութիւններու եղանակեալաւ է։ Թագաւորին առաջին բոլորքի Մ. Պալլադի անոնց պատասխանեց մէկ քանի հակիւճ, տարտամ, անորոշ, անգոյն բացատրութեանց մէջ։ Իտալիոյ Նիսիի Ժողովոյն մէջ՝ նմանապէս Մակեդոնիոյ վրայ եղած հարցադրութեամբ, որուն պատասխանեց արտաքին գործերու խորհրդականը — Բալիէտտի նախարարին յանկարծական հիւանդութեանը պատճառաւ։

Բայց մանաւանդ նախորդ շաբթու մէջ, գրեթէ նոյն թուականին, մէկ կողմէ Անգլիոյ Լորտերու Ժողովոյն ու միւս կողմէ Ֆրանսայի Միտիտի, Ժողովոյն մէջ Արեւելքի այս հարցադրութեանը նուիրուած երկու մեծ վիճաբանութիւնները գուցէ մեզի մէկ

քանի լուսաբանութիւններ կրնան տալ թուրքիոյ վերաբերութեամբ Եւրոպայի զանազան պետութեանց — ու ժողովուրդներուն ալ — հետեւելիք քաղաքականութեանը կամ գիտութեանը վրայ։

Ու նախ՝ ի՞նչ հիմնական տարբերութիւն հաւասարապէս քաղաքականութեանը երկու ժողովուրդներու կառավարութեանց պաշտօնական յայտարարութիւններուն միջեւ։ մէկ կողմէ մ.թ. 13ին, Անգլիոյ ազատականներու բարձր խորհրդարանին մէջ, Լորտ Նիտլիոնին մէկը — որ միայն անուշով ծանօթ է — խօսելով Մակեդոնիոյ արդի շփոթ, խռնակ, անստորգ կացութեանը, ու տեղաւորական քրիստոնեայ ժողովուրդներու հարստահարութեան վրայ, իրերու անցեալ, ներկայ ու ապագայ ծախող գրութեան իբր տեսական, միակ գերագոյն պատասխանատու կամ բացատրութիւնը, ո՛չ թէ Մակեդոնիոյ շրջապատէն տեսնուած թէ Մակեդոնիոյ մեծագոյն ժողովուրդներու, ո՛չ թէ Մակեդոնիոյ հարստահարութեանը պաշտօնական արտօնեալ շահատակութիւնները, — այլ ընկալելով Մակեդոնիոյ յեղափոխական կոնքիները, որոնք եթէ՛ անկողմնակալ կամ համակիր անհատներու խոստովանութեամբ իսկ, երբեմն մէկ քանի դատապարտելի ծայրայեղութեանց մը շրջապատէն, միշտ անհունապէս նուազ զատապարտելի են քան թոք հարստահարիչները, — այլ պոռկար իշխանապետութիւնը, որ իր հարստահարեալ զբաղի հայրենակիցները հիւրընկալելու աննիւթի, մեղապարտ յանցանքը կը գործէ։

Գոնէ կապաւորէ որ, նկատի առնելով մանաւանդ հայկական մեծ կոտորածներու տեսողութեանը միջոցին թուրքիոյ նկատմամբ Անգլիական կառավարութեան յայտարարեալ հակակիր, յարձակողական ու շունթալից քաղաքականութիւնը, Անգլիոյ արդի արտաքին գործերու նախարարը պատահութեամբ օգտուէր — այժմ որ թուրքիոյ ղեկավար Կահաճատին կարծիքին մէջ զգոհութեան ու գրգռութեան ազդեցութեանը կը գործէ։ Եւ ցոյց տար որ եթէ հոթը տարի առաջ, հայկական տագնապի միջոցին, ուրիշ պետութիւններ ալ անաւարտ Անգլիոյ խորհուրդներուն, վերջնայն ջանքերուն իրենց գործակցութիւնը միացնելու ըլլային, գոցէ Մ. Արեւելքի գործերուն մէջ արդի խառնակ

ու վտանգաւոր կացութիւնը գոյութիւն չէր ունենար։

Բայց Լուստոն Մարքիզը, որ լորտ Սոլզպերիի քաղաքական գործունեայ ասպարէզէն վերջնապէս մեկուսանալով, արդի պահպանողական դաշինքին մէջ իր պատերազմական նախարարի պաշտօնը թողլով՝ արտաքին գործերու պաշտօնարանին իւր անցաւ, Լորտերու Ժողովոյն մէջ իր արտասանած բացատրական մէկ մեծ ճառովը անհունապէս աւելի կը ձգար Պալլադի եւ իրերու մէջ իրերու ալ իր վիճակին եթէ ոչ բոլորը, գոնէ ամենամանր պատասխանատուութիւնը, — Լորտ Նիտլիոնին — վերադրելու Մակեդոնիոյ յեղափոխականներու ու պոռկար կառավարութեան, մոռնալով որ նոյն այդ այժմ Մակեդոնիոյ հարստահարող կառավարութիւնն էր որ քիչ տարիներ առաջ ալ Հայաստանի մէջ կազմակերպեր ու անպատիվ կերպով գործադրեր էր Հայկական կոտորածները, որոնց արձագանքը, առաւել, ճշգրիտ ամենէն աւելի — Անգլիոյ ժողովուրդին խաւերուն մէջէն կեղծաւոր ու շինծու բողոքի աղաղակներ խլեց։

Պէտքը չէ՞ր գոնէ որ, այն միջոցին իսկ երբ Ֆրանսայի մէջ աւելի կուսակցութեանց վերաբերող քաղաքական բարձր անձնաւորութիւններ կը միանային իր հրապարակային միջոցներով, ի՞նչ ձեւով արդարեւ մէջ, ի՞նչ նորոգարանին մէջ, ի՞նչ ներքին համար իրենց կառավարութեան որ Մակեդոնական խնդրին հետ, Մակեդոնական խնդրին առաջ կայ հայկական խնդիր մը որ տարիներէ ի վեր լուծուի, կարգադրութեան կապաւոր, — պէտքը չէ՞ր որ 95-96ի ջարդերուն առաջ հայերուն շարաշրջ պաշտպանը ըլլալու յաւակնող նոյն այդ Անգլիոյ նախարարը այսօր իր ճառին մէջ յիշատակէր գոնէ Հայաստանի ու հայերուն անուշ, ըլլալ իսկ մէկ քանի տարտամ, չոր, անհետեւալք մնալու իսկապէս դատապարտուած բառերով, ինչպէս ըրաւ իր արտաքին գործերու Ֆրանսայի պաշտօնակիցը։

Մակեդոնիոյ խնդրին նկատմամբ ֆրանսական կառավարութեան հրատարակած Դիւանագիրքին վրայ այս էջերու մէջ մեր ներկայացուցած հակիրճ ամփոփումը կարգադրողները յիշելու են թէ ինչպէս, մինչ Ֆրանսա ու Ռուսիա Մակեդոնիոյ ի նպատակ բարեկարգութեանց նախնական ծրագրի մը իրենց մէջը մշակելու կը հետամտէին, Անգլիոյ Բարիքի գեապանը խորհուրդ կուտար Ֆրանսայի կառավարութեան որ մեծ Պետութիւնները միանային հաւաքական ազդու դիմում մը ընելու։ Սուլթանին — ո՛չ — այլ,

Պալլադիի՝ որպէս զի Մակեդոնիոյ «խոռվարար»ները սանձելու համակերպէր։ Լորտերու Ժողովոյն մէջ տեղի ունեցած վերջին վիճաբանութիւնը ցոյց կուտայ թէ Անգլիա, Մակեդոնական խնդրին կարգադրութեան տեսակետով իր այդ թրքապետական քաղաքականութիւնը տակաւին կը շարունակէ, ու իր շահերուն հիմնովին ներհակ կը նկատէ իրապէս Միւս ցեղէ սեռած, համապատասխան միտումներով ազդուած ժողովուրդի մը վարչական կամ քաղաքական ազատագրութեանը աջակցիլ, ինչպէս ժամանակին ալ հոգեով մարմնով Պալլադիական իշխանապետութեան հիմնարկութեանը մոլեգնօրէն ընդդիմացած էր։ Եւ ինչպէս, եթէ Մակեդոնիոյ հարցը պիտի լուծուի, ամէն պարագայի մէջ Անգլիոյ աջակցութեամբ կամ հաւանութեամբ չէ որ պիտի ըլլայ։

Տ. Լ.

Վ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ
ԳԱՌԱԴԱԿԱՆ ՆԱՍԱԿԸ

Սիրելի ընկերներ,

Անկախօրէն սպասում էի նամակիս պատասխանին։ Ես չեմ իմանում, նամակս չէ՞ք ստացել։ Իսկ թէ որ ստացել էք, ապա ի՞նչ է պատահել որ չէք ուզում պատասխանել, մինչդեռ, ինչպէս նամակի պարունակութեանց, ձեզ ուղղուած առաջարկին հասկանալի էր, եթէ ինչ հստակութեամբ, որպէս անկեղծ ընկերի, միւս կողմից ես կապեմ չունեմ որ գոյք յիշու էք Ա. Թին եւ նախանձախղիւր էք նորա պատուին այնքան, որքան ես պէտք էր պատասխանած լինէիք մինչեւ հիմա։ ձեր լուրերը աւելի քան տարբերակ եւ զարմանալի է, կրկնում եմ եթէ ստացուած է նամակս։ Ինչ եւ լցէ, առաջին նամակովս ձեզ գրել էի, Աւետիսը պատասխանել է Հ. Սեւաթիւնի մարդին ետապատիկ քոտապատիկ բրօշիւրով եւ այլ բրօշիւրի ձեռագիրք ուղարկել էր կենտրոն, ըստ իրենց աստիճանի, կարգադրող յետոյ հրապարակելու համար կենտրոնի տպարանում։ Կենտրոնի տպարանի հրատարակելու մտքին սաւետիկ հակառակել էր Պր. Ն. Խոշակովեանը, ո՞վ պիտէ ինչ ինչ մտքերով, մերոնց կողմից մէկի հակառակութիւնը էլ հակառակել է թէ ինչ հետեւանք կրկնեմար... եւ ուստի Հնչակի տպարանում հրատարակելու խորհուրդը ջուրն է ընկնում։

Աւետիսը փող չունէր, իսկ բրօ-

չիւրի հրատարակութիւնը յետաձգել անկարելի էր, քանի որ առանց այդ էլ շատ էր ուշացել. եթէ ինքը միջոց ունենար, ոչ մի տեղ չէր գիտիլ, կը հրատարակէր եւ «անճարակ թղութիւն» վաղուց ջախջախած կը լինէր. ինչ պէտք էր անել, Սպասելով Աւետիսը հօ չէր հարստանալու եւ առանց գրքից, ընկերները եւ Աւետիսին յարգողները կողմից օգնութիւն հասնելու չէր հրատարակուիլ:

Պ. Ս. Սազունին, Աւետիսի ամենալու բարեկամը, սրտանց փափաքում էր հրատարակուած տեսնել այդ բրօշուրը: Նա առանց երկար մտածելու, ձեռագիրը ուղարկեց Աւետիսին եւ գրեց որ անմիջապէս յանձնէ տպագրութեան, առ այժմ յանձն առնելով սկզբնական ծախքերը, մինչեւ մնացածի համար գիտէ կովկաս ընկերներին, մինչեւ տպագրութեան ամբողջանալը: Ես էլ իմ կողմից յանձն առայ գիտիլ ձեզ, ինչպէս արդէն գիտէք իմ նախկին նամակից:

Բրօշուրը յանձնուած է տպագրութեան, ապաւորուած է հազար օրինակ: Աւետիսը գրում է, 1,000 օրինակի համար ծախք կը լինի 14—15 անգլիական ոսկի եւ մինչեւ չի վճարուի, չենք կարող ստանալ բրօշուրները: Այսպէս, սիրելի ընկերներ, դուք տեսնում էք որքան արդարացի կերպով սպասելի էր, որ դուք ձեր բաժին օգնութիւնը չստացիք: Հասցնէիք կամ այստեղ, կամ ուղղակի իրան, Աւետիսին, որի հասցէն նոյն նամակով ուղարկեցի ձեզ: Դեռ, եթէ ուղղակի իրան կուղարկէք, ուղարկած նպաստի մասին բացատրութիւն տուէք, թէ ինչ նպատակով էք ուղարկում: Դեռ անգլիական ոսկի ես եմ տալիս, եթէ վեց կամ եօթը ոսկի էլ դուք հաւաքէք, այսպէսով կէսը մենք հոգացած կը լինենք, իսկ բրօշուրները՝ ուր որ ուղարկենք, թէեւ գին չենք որոշել, ընկերներին միջեւ թէ ընկերներից դուրս կը բաժնուին, փոխարէնը կամաւոր նուէրները՝ զուեկով, որը մի տեսակ հանգանակութեան ձեւ առնելով, բայց ոչ հանգանակութեան անուն, հաւաքուած գրամով մի փոքր կը թեթեցուի:

Աւետիսը կրած նիւթական նեղութիւնները, որով նոյնպէս միջոց կը տաւ իրան նուիրելու գրական աշխատութեան, որ այնքան փափաքող է, եթէ ստիպուած չը լինի օրական չոր հացի համար ուրիշ զբաղում ունենալու: Կովկասի ընկերները այդ կեղտոտ բրօշուրի հրատարակութիւնից յետոյ, առանձին գուրգուրանք են տածում դէպի սիրեցեալ Աւետիս, մինչեւ անգամ փորձել են շան սատականել թագուն նպատակներով ձեռքի թական միջոցի գիտող Հ. Ա. ին, եթէ վերջինս գուշակելով իր գլխին գալիքը փախուում չտար: Անսխառն կարծել է, թէ զորանով վերջնապէս պիտի խորտակէ այն մարդին, որի ստուերից անգամ ստեղծում են չմտածելով իր գործած չարիքը մեծ բարիք է դառնալու նորան եւ իսկական չարիքներու համար:

Թե ինչ ճշմարտութիւններով առ այժմ ոչինչ չեմ գրել, մինչեւ որ մեր Աւետիկայի ներկայացուցիչը տեղի հասնէ: Դուք նորան հետ կը խորհրդակցէք ձեր գործունէութեանը մասին: Վերաւանդախախտ սեղը Ամերիկան է, որի համար մասնաւոր ջանքով եւ վերջին ծայր խնամութեամբ պէտք է գործել, մնացած կողմերին համար, օրինակ, Կովկասում, Պարսկաստանում, Իրանը լաւ երեւոյթ ունենում: Դաւանդող վստահ ենք, թէ կարող ենք լաւ ուղղութիւն տալ: Դուք մտերմութեամբ եւ անկեղծութեամբ բացուեցէք Պր. Սապահին եւ միեւնոյն ժամանակ նրան առէք ձեր պաշտպանութեան տակ: Երբեք միտաւորացի իր պարզութեամբ կարող է էնթրիկներին զոհ դառնալ, եթէ դուք ուղղութիւն չտաք իրան: Եւ միւս կողմից էլ զգուշութիւններ չձեռք առնէք:

Աւետիսը պատրաստ ունի ուրիշ աշխատութիւններ, որի հրատարակութեան հոգը նոյնպէս պիտի ծանրանայ ընկերների վրայ: այս բրօշուրը տեսնելուց յետոյ, կարծում ենք լաւ պիտի լինի բաժանորդներ դառնել եւ բաժանորդագրով հրատարակութեան տալ միւս աշխատութիւնները: յամենայն դէպս՝ այդ դեռ ապագայի գործ է, ներկայի համար մտածենք առ այժմ:

Ամսոյս 16ին, վաղը, չաբաթ օր ճանապարհ կընկնեն մեր ներկայացուցիչները, Պ. Սապահ-Գիւլեան եւ մինն Պ. Բարսամեան:

Սիրելի ընկերներ, աշխատեցէք տեղեւոր գլխաւորապէս վերակազմեալ ընկերների հետ միասին կամ աւելի լաւ է ուղղակի նրանց կողմից, մի ընկերական հանրագրով պահանջ ներկայացուի Կեդրոնին Հնչակում մեր Աւետի աշխատակցութեան համար, այդ մասին ուրիշ տեղեր էլ եմ գրել: Երբ պահանջները գրքից կգան, հարցին լաւ ընթացք կուտայ:

Հաւանորէն եթէ փորձանք չպատահի, Պ. Սապահը չաբաթ օրը հասնի եւ թերեւս այն նամակիս հասնելուց առաջ իրա հետ տեսնուէք: Հասցէս Կեդրոնի տան վրայ, այստեղ էլ բնակում եմ:

Աւետի հասցէն Մ. Ա. . . . եւայլն

Միւս սիրալիր բարեկեցիկ Ձերդ Հ. Արզումանեանց

Հին Հնչակեաններու կողմէ կեդրոնի անգամ ընտրուող Պ. Արզումանեանցի այս նամակը որոշապէս ցոյց կուտայ թէ Պ. Պ. Արզումանեանց եւ Սաքունի իրենց գլխաւոր նպատակ եւ գործըրած են Միւս թեան պայմաններուն դէմ դաւադրելով, Աւետի (նազարբէկեանը) կրկին Կեդրոնի մէջ բերել: մինչդեռ միութեան բանակցութեան մէջ փոխադարձ համաձայնութեամբ ընդունուած էր թէ Հնչակեան կուսակցութիւնը ու եւէ կապ եւ յարաբերութիւն չպիտի ունենայ նազարբէկեանի հետ: Իսկ կեդրոնի այդ երկու անգամները, ինչպէս կերեւայ նամակէն, աւելի նազարբէկեանի վրայ կը մտածեն ու այնպէս ալ ուրիշները կը հրահանգեն, քան միացեալ կուսակցութեան գործին:

Նաեւ Սապահ Գիւլեանի պէս աղտոտ հրէշ մը Ամերիկայի ներկայացուցիչ կը կարգին, այն սակարկութեամբ որ անկապ հոն իրենց թագուն նպատակը իրագործելու աշխատի եւ այդպէս կը յանձնարարեն իրենց ծանօթ հին Հնչակեաններուն: Մեր աւանդական խախտ սեղը Ամերիկան է, կըսէ Պ. Արզումանեան նամակին մէջ: Ա-

մէն ոք գիտէ թէ Հնչակեանները ուրիշ ամէն երկրներէ աւելի Ամերիկայի մէջ զօրաւոր են, բայց այդ զօրութիւնը վերակազմեալ հատուածին կը պատկանէր, հինքը քիչ էին հոն: այս պատճառաւ Հնչակեանութիւնը հոն խախտ կանուանէ: Եւ Սապահ-Գիւլեանին միջոցաւ զօրացունել ջանալ կը յանձնարարէ իր կողմնակիցներուն: Հոս ալ պարզ կը տեսնուի հատուածական ոգին եւ դաւը նախկին վերակազմեալներուն դէմ:

Գաղտնի ծրագրերի մը խօսքը կընէ եւ այդ չը վստահիր նամակին, ու Սապահ-Գիւլեանի Ամերիկա հասնելուն կը յետաձգէ: Եւ խոստովանի նաեւ թէ նոյն ոգեով ալ Կովկաս եւ պարսկաստան կը գործուի, ուր իրենք շուտ երեւոյթ ունին: որովհետեւ այդ կողմերուն ներկայացուցիչ կարգուողները իրենց հին հատուածին կը պատկանին:

Ալ գիւրին է մակաբերել թէ հին հատուածի պատկանող գործիչներուն մէկ մասը իրենց ծրագիր ունեցած են Միութեան դիմակին տակ գործելով, նազարբէկեանութիւնը վերահաստատել:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՎՐՈՒԹԵԱՆ

ԱԹԵՆՔ, 1 Մարտ

... Խմբագիր,

Ձեր պատուական թերթին վերջին թիւերէ միոյն մէջ զարմանք կարգացինք տեղեկագիր մը Գէօքլէնէի Հոգաբարձութեան կողմանէ հրատարակուած: ամբաստանելով Աթէնքի քահանայ Արթ. Տէր Խորէն Հայր Մուրաբանը՝ իր թէ Ռուսոյնոյ մէջ ի նպատակ տեղեւոր երկրեցեւոյն եւ նախակրթարանի շինութեան հանգանակութեան իւրացուցած է 1,000 Փր. գումար մը եւ: Եսմած է Գէօքլէնէի հիւրանոցի մը մէջ անվայել եւ անպարկեշտ վարմունքով:

Ապացուցանելու համար երկտողով մը թէ որչափ անհիմն է այդ զրպար-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ (62)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՎԵՂԱՐԱՌՈՐ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ

— Տէր կոմիտաս մեքենաբար ծունկի եկաւ ու բացապանչեց:

— Ե՛ս, որդեկա՛կս, ե՛ս . . .

— Դո՛ւք, գոչեց Սիրվարդ գորշանքով մը:

— Այո՛ւ. . . ե՛ս, կըլինեց Տէր կոմիտաս թոթովելով:

Սիրվարդ տեղէն վեր դատկեց, քայլ մը ետ քաշուեցաւ՝ մարդու մը պէս որ սեւ օձէ մը խոյս կուտայ, սարսուռաց բոլոր մարմնովը ու յետոյ՝ կատաղութիւնը չկրնալով զսպել, յարձակեցաւ Տէր կոմիտասին վրայ ու ծանր ապստակ մը իջեցուց անոր ետեւին, գոչելով:

— Դի՛ւ, դի՛ւ . . . հրէ՛շ . . .

Տէր կոմիտաս անշարժ մնաց: Կարծես թէ չը զգաց այն ծանր ապստակը քոր Սիրվարդ անոր ետեւին իջեցուց: Միայն թէ՛ գրպանէն սեւ թաշկինակ մը հանեց ու սրբեց այտերուն վրայէն վաղող թուրը:

Սիրվարդ խղիւղ կուզէր այդ հրէշը . . . բայց

չկրցաւ քայլ մը յառաջանալ, որովհետեւ իրիշտ տանջեց զինքը: Վարանած ու ինքնիմէ կըսէ՝ սկսաւ զողալ:

— Դո՛ւտ, դաւաճա՛ն, չո՛ւտ տակից հեռացիր, եթէ ո՛չ գլուխդ կը ջախջախեմ գոչեց Սիրվարդ՝ գոյբութով մը անոր գլուխը ձեռքերուն մէջ ճգմտեղէ կողք:

Ու, յիմարի մը պէս, գլուխը թողուց ու անոր վրիզ բռնել ուզեց: Բայց այդ պահուն մէկը թեւէն ուժգին կերպով մը քաշեց ու ձախեց:

— Բաւական է, Սիրվարդ:

Երիտասարդը միջնաբար ետին դարձաւ ու տեսաւ որ իրեն հետ խօսողը Վանական էր:

— Թողէ՛ք զիս . . . անա՛ ալդ հրէշը կը խոստովանի թէ իմ արեւուն մոտ է, բացադանչեց Սիրվարդ:

— Լուռ թի՛ւն . . . բանաստեղծը հիմակ հոս պիտի գայ, ընդհատեց Վանական:

Ու յետոյ, Տէր կոմիտասին դառնալով, ըսաւ .

— Եթե՛ս, Տէր Հայր:

Տէր կոմիտաս ոտքի եկաւ ու ապուշի մը պէս հետեւեցաւ Վանականին:

ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆՑ

ՆԵՐԿԱՅՆՑՈՒՑԻՅԵՆԵՐ

Ակաբի թաղի մէկ անկիւնը միայնակ ու բաւական կուրիկ շինուածքով սուէն մը կար, որուն տէրը յետեւն անցած ծերունի մըն էր:

Ծերունիին կիներ մնաւ էր շատ տարիներ առաջ, իսկ զուակ ունեցած չէր:

Այդ մենաւորիկ տունին մէջ երիտասարդ մը կը լնտակէր՝ համեստ վարձք մը վճարելով:

Ներսէս Արծրունին այդ տունը մտաւ եւ երկտապարդին տնակը առաջնորդուեցաւ:

Երիտասարդը զրաղած էր, կըր Ներսէս Արծրունին անոր մօտեցաւ ու բարեկեց:

— Հրամեցէ՛ք, բարեկեա՛մս, ըսաւ երիտասարդը համակրական շեշտով մը:

— Համարտե՛ք, կը խնդրեմ, մըմեջեց Ներսէս Արծրունին:

Ու կակուղ միտաւոր մը վրայ նստեցաւ:

— Կը հաճի՞ք ձեր ո՛վ ԸԼԼԼԸ յայտնելու, հարցուց երիտասարդը՝ հեռաբլբլուած ձայնով մը:

— Ա. . . դեղին եմ, պարս՛ն, անունս Սուպահ է, պատասխանեց Ներսէս Արծրունին վերապահ շեշտով մը:

— Այսօր եկա՞ք:

— Ո՛չ, երէկ գիշեր եկած եմ:

— Ինչպէ՞ս է գիւղը:

— Լա՛ւ է . . . միայն թէ . . .

— Ի՞նչ կայ:

— Երբեմն ցաւալի զէպքեր սկսած են պատահիլ:

— Ի՞նչ զէպքեր . . .

— Կուսակցական կռիւներ, ըսել կուզեմ:

— Ի՞նչ անել . . . Կուսակցական կռիւները տեղի կունենան ո՛չ թէ անօրուա բանկուա համար, այլ՝ ինքնիշխան հանրային շահը նկատի առնելով, բարեկեա՛մս, անանկ չէ՞: Բայց ձեր գիւղին մէջ ալ կուսակցական բաժանումներ կան . . .

տուրիստները, Հոգի բարձու թիւնս կը
փութայ հրապարակաւ յայտարարել թէ
Ռուսիայի հանգանակութեան ար-
դիւնքը, 1961 թրանք 60 սանդիւմ,
ամբողջովին ստացած է Տէր Խորէն
քահանայէն եւ կը խնդրէ նաեւ հրա-
տարակել հանգանակութեան ներկակալ
մանրամասն ցուցակը, ի սէր ճշմարտո-
ւթեան եւ ի միամտութեան բարեպաշտ
նոր իրաւունքաց:

Հաճեցէք ընդունել մեր յարգանաց
հաւատարմին,

Ի դիմաց Հոգաբարձութեան
Ատենային
Կարապետ Աղաբեկեան
Ատենային
Աղիքաւ Գ. Եսգընեան

ՅՈՒՅԱԿ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՌՈՒՄԱՆՈՅ

Ի նպաստ Արեւիկ Եկեղեցւոյ եւ վարժարանի շինութեան Արժ. Տէր Խորէն ֆին. Մարտիկեանի ձեռնով	Յր. Սն.
Սուղիւնայէն	257.70
Թուրքիայէն	62.50
Պապատաղէն	55.—
Կալապէն	185.—
Թէպուէն	77.—
Պէտլատէն	56.—
Եաշէն	60.—
Պոթուլանէն	258.—
Ռոմանէն	129.—
Պաքովէն	42.—
Յօքլանէն	107.—
Պրայիւա	198.—
Պուրէշէն	322.—
Բէօսթէնէն	114.40
Բէօսթէնէն	23.—
Բէօսթէնէն (Չէրն. վտա)	22.—
Գումար	1,961.60

(Կնիք)

ՀԱՇՈՒԵԿՆԻՐ
ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

ՄՈՒՏԻ	Յր. Սն.
1902 Նոյեմբեր 26 թ թատերա- րական ներկայացումի վա- ճառուած ստանակներէ գոյս- ցած	601.65
Վառնայի եւ այլ տեղերու նուիրատուներէ	110.50
Շուրվայի հայ գաղթականնե- րէն	74.45
Թրնովայի հայ գաղթականնե- րէն	38.50
Վառնայի քարահանքի հայ գործաւորներէն	15.—
Վառնայի մանածի գործարանի հայ գործաւորներէն	7.—
Բրովարայի հայ գաղթական- ներէն	9.50
Քոստայի հայ գաղթականնե- րէն (ոսկեղբամ)	60.—
Ֆէնոմի (Եգիպտոս) հայ գաղ- թականներէն (ոսկեղբամ)	16.25
Թէքուէի հայ գաղթականնե- րէն (ոսկեղբամ)	127.—
Ճրնովայի հայ գաղթականնե- րէն (ոսկեղբամ)	110.—
Վրտինի հայ գաղթականներէն	20.—
	1189.85

ԵԼՔ

Հայ գերաստնական Նասիճա խումբին վճարուած	100.—
Դոնապանի մը եւ ծառայի մը	2.50
Թուրքի, տպագրութեան եւ աթոռի ծախք	33.65
Նամակագրութիւն	2.25
Փոխգրի եւ տետրակի	1.60
Մնացած ապագիւնը	10.30
Արծաթ գրամները ոսկիի վե- րածելու տարբերութիւն	18.30
Վեհ. Կաթողիկոսի հրամանաւ Կարսի առաջնորդ Տէր Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանի ղըր- կուած 51 նաքուրիս	1020.—
Գանձապատին քով պատրաստ ղրամ (50 սանդիւմ փութի 75 սանդիւմ Աղքատախնամի)	1.25
	1189.85

Ռուս-թուրք սահմանագլխի վրայ

գտնուող հայ գաղթականներու օգնու-
թիւն հասցնելու նպատակաւ կազ-
մուած Յանձնախումբ, կուգայ հրա-
պարակաւ շնորհակալութիւն յայտնե-
լու սուրբ անոնց՝ որոնք իրենց պար-
տաճանալութեամբ չը պաշտան մաս-
նակցիլ սոյն բարի գործին:

Մնամք յարգանք
Հոգատար Յանձնախումբ
Հայ գաղթականաց
Հ. Գ. Քիւսանեան
Գ. Սահարանեան
Յ. Կ. Ճանկիւրեան
Յ. Ճաւնեան
Վառնա, 5 Մարտ 1903

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտ 11ին Յրանսայի Երեսփ.
Ժողովոյն մէջ երկրին արտա-
քին քաղաքականութեան ընդհա-
նուր վիճաբանութեանը միջոցին,
արտաքին գործերու նախարար
Մ. Տէլբասէ, պատասխանելով
Հայկական խնդրոյ վրայ Միլլիթօս,
Սէնպա ու Բաէնանէ երեսփո-
խաններու հարցապնդումներուն, ը-
սած է. «Միթէ Հայաստանի վե-
րաբերութեամբ հինգ տարիէ ի
վեր Յրանսա ցոյց չտուաւ, կրկ-
նակի միջամտութիւններով, որոնց
նկատմամբ հայերը իրենք իսկ մէ-
կէ աւելի անգամ իրենց շնորհա-
պարտութիւնը մեզի յայտնեցին,
թէ Յրանսա մարդկային ոչ մէկ
տառապանքի առջեւ անզգայ կը
մնայ: Միթէ, տակաւին երէկ
իսկ, դէպի Հայաստան ճամբայ
հանելով մասնաւոր պատգամաւոր-
ներու խումբ մը ու Հայաստանի
մէջ մեր հիւպատոսական գործա-
կալներուն թիւը շատցնելով, Յը-
րանսա յայտնի կերպով ցոյց չի
տուաւ թէ իր կամքն է ետ չկենալ
գէշ միտումները անդամաւորուող,

չար դիտաւորութիւնները չեզո-
քացնող հակոգութեան մը. այո՛,
պարոններ, եթէ ձեզի կարգայի
Հայաստան ղրկուած մեր գործա-
կալներու մեզի ուղարկած տեղե-
կագիրները, դուք պիտի տես-
նէիք թէ մեր որքան գործադրած
ազդեցութիւնը զօրեղ եղաւ»:

— Յրանսացի ծանօթ գրագէտ
ու իմաստասէր Մ. Անատոլ Յրանս,
անդամ Բրո Արմէնիաի խմբա-
գրութեան, «Հանրապետական Ըն-
կերութեան» նախաձեռնութեամբ
Հայաստանի ու Մակեդոնիոյ հա-
րստահարեալ ժողովուրդներուն ի
նպաստ կազմակերպուած գումա-
րու մը մէջ ճառ մը խօսած է.
բանախօսը, Հայկական կոտորած-
ներու մէկ ամփոփ նկարագրու-
թիւնը ընելէ ետք, ազդուապէս
պահանջած է որ Յրանսա պար-
տաւոր է, եթէ պէտք ըլլայ ա-
ռանձին, հայերու ինպաստ մի-
ջամտել:

— Մարտ 18ին Կիւրիկիոյ նո-
րընտիր Կաթողիկոս՝ Տ. Սահակ
Եպիսկ. խապանեան իր հետեւորդ-
ներով ու պատրիարքարանի հրա-
ւիրակներով Ատանա ժամանած
է. տեղաբնակ հայ ժողովուրդը
մեծ ընդունելութեամբ զայն հիւ-
րընկալած է:

— Պոլսոյ Աղք. Պատրիարքա-
րանի Ա. Գործակատար՝ հրաժար-
եալ Տիգրան Տէր Ներսէսեանի
իբր յաջորդ Ա. Գործակատար նը-
շանակուած է Արիս Ֆէսեան, որ
Կալապի (Ռուսմանիա) մէջ թուր-
քիոյ դեր-հիւպատոս անուանուած
էր:

— Եգիպտոսէ Տ. Պետրոս Էս-
րապիւրեան 25 ոսկի Պատրիար-
քարան ղրկած է, ինպաստ դա-
ւառական որբանոցներու:

— Պոլսոյ Մապաի թուրք թեր-

— Չկային... բայց սկսած են ըլլալ:
— Անշուշտ, հարուստներու եւ գործաւոր դասա-
կարգերու մէջ, սնանկ չէ:
— Ո՛հ, պարո՛ն, խօսքս հարուստ եւ գործաւոր
դասակարգերու կոխի վրայ չէ... փոքր Աստու-
ծո՛յ, գեղերու մէջ ատանկ կոխներ չունինք, ինչ-
պէս տեղի կուսնանան ձեր քաղաքը:
— Հապա՛... ընդհանրեց երիտասարդը:
Ներսէս Արծրունին կռահեց որ դէմքը չհասկնալու
կը վարնէր իր յայտնութիւնները, կռահեց որ կը-
կրկնալի վերապահութեամբ կը խօսէր եւ կը տարա-
կուսէր իրմէն. ուստի առանց պատասխանելու,
հարցուց.
— Պարո՛ն, պիտի վստահե՞ք իրարու վրայ...
— Ի՞նչ կայ չվստահելու... չեմ հասկնար, ա-
ռարկեց երիտասարդը՝ աժգունելով:
— Լաւ ուրի՛ն, խոստացէ՛ք որ չպիտի կռակածիք
իմ անկեղծութեանս վրայ:
Երիտասարդը գրեթէ զարմանքով մը նայեցաւ այս
անգամ ու մոմջեց.
— Բան մը ունի՞ք քոսիւն:
— Այո՛... եւ շատ կարեւոր է, շնչուց ներսէս
Արծրունին:
— Յայտնեցէ՛ք, կը խնդրի՛մ, ընդհանրեց երիտա-
սարդը՝ յուզմունքով մը:
— Կեցէ՛ք... նախ՝ յայտնելու համար պայման մը
ունիմ:
— Ի՞նչ պայման:
— Պէ՛տք է որ ծանօթանանք իրարու: Կարծիմ
Յեղափոխական կուսակցութեան մը ներկայացուցիչն
էք դուք, այնպէս չէ՞:

— Ամենեւին... ո՛վ ըսաւ, բացառաւեց երիտա-
սարդը:
— Երբ յայտնեմ թէ՛ ո՛վ ըսաւ ձեր Յեղափոխական
կուսակցութեան մը ներկայացուցիչն ըլլալը, պիտի
հաւատա՞ք ինծի:
— Ո՛վ է...
— Կը ճանչէ՞ք Ներսէս Արծրունին:
— Ո՛հ... միայն թէ իր անունը լսած եմ:
— Կը հաւատա՞ք թէ Անկախութեան հիմնադիրնե-
րէն մին է ան:
— Կը հաւատամ:
— Խիստ լաւ... գիտցէ՛ք որ ան է ըսողը... իր
կողմէն կուգամ:
Երիտասարդը լուց: Արդարեւ, լսած էր այդ մեծ
մարդուն անունը, զոր թուրքերն ու քուրտերը գրեթէ
առնապելի մը պէս կը պատմէին:
— Ո՛ր կը գտնուէ՛ք ան, հարցուց երիտասարդը
զողդողալով:
— Ո՛վ գիտէ... իրն է լեռը, իրն է անտառը,
իրն է լեռնաշղթաներու ամենէն զարհուրելի կերճը,
մէկ խօսքով՝ իրն է ազատ երկրները, պատասխանեց
Ներսէս Արծրունին՝ հոգւոյն խռովքը զրպիւր ջա-
նալով:
Երիտասարդին կերպարանքը ճառագայթ մը պա-
տեց, ինչպէս խաւարին մէջ թափանցող լուսոյ ցուլք
մը: Հոգին հանդարտած էր: Երկիւղը փարտած էր
ամեն կերպով: Հետեւաբար ոտքի ելաւ ու Ներսէս
Արծրունին ձեռքը բռնելով, մոմջեց.
— Վստահ եմ ձեր վրայ եւ կը յայտնեմ թէ վստի
մէջ կազմակերպուած կուսակցութեան մը լիազօր
ներկայացուցիչն եմ ես:

— Ո՛ր կուսակցութեան, հարցուց Ներսէս Արծրու-
նին:
— Դրօշակեան կուսակցութեան:
— Ո՛ր է ձեր կուսակցութեան կեդրոնը:
— Մեր կուսակցութիւնը կեդրոն մը չունի, բա-
րեկամս:
— Հապա՞:
— Մենք Ապակեղոնացեալ կուսակցութիւն մը
ունինք՝ որ իր արամազորութեան ներքեւ երկու
«պիւնո»ներ կը պահէ: Պիւնոններէն մին Արեւմտեանն
է, որուն իրաւասութիւնն է վարել թիւթի մը վար-
չական բարձրագոյն պաշտօնը. միւսը՝ Արեւելեանն
է, որմէ կախում ունի հայրուկային արշաւանքնե-
րու ծրագրին գործադրութիւնը:
— Ըսել է թէ՛ մասնաւոր կեդրոն մը չունիք որ
վարէ ձեր կուսակցութեան ամբողջ գործերն, ա-
նանկ չէ՞:
— Ո՛հ... ի՞նչ հարկ կայ:
— Եթէ հայրուկային արշաւանք մը պատրաստուե-
լու հարկը կը տեսնուի, դուք կարո՞ղ էք ձեռնար-
կել:
— Անշուշտ:
— Ձեր պատասխանատուութիւնը մէկէ մը կա-
խում չունի:
— Ունի... պիտո՞ն է:
— Ներսէս Արծրունին զրուիւր շարժեց թիւթի
կերպով մը ու ժպտեցաւ: Երիտասարդը չնշմարեց...
հետեւաբար շարունակեց իր խօսքը:

(Շարունակելի)

Թը կը գրէ. «Կայսերական իրա-
տէ մը կը հրամայէ 1000 զորաշ
թուակ յատկացնել Սիսի նախորդ
կաթողիկոս Տ. Յովհաննէս սրբա-
զանի որ Պէրսիոյ կը բնակիր: Այս
այն եկեղեցականն է որ, տասնեակ
մը տարի առաջ ուզած էր կառա-
կարութեան գործումը ու մեղսակ.
ցութեամբ, ինքզինքը կիլիկիոյ
Աթուռոյն կաթողիկոս հռչակել:

ԱՐՀԱՄԱՐԱՆԻՆ ԱՆ ՉԱՓԸ ԿԱՅ

Իր անկարելիութիւնովը ծանօթ
թերթին մէջ տարիներէ ի վեր իմ
հասցէիս ուղղութեամբ մոլեղին անուա-
նարկումներուն տարափոխերը միշտ ար-
համարհելի եմ միայն: Երբ, սակայն,
յեղափոխական գործունէութիւնը թու-
նաւորող սուտեր կը ներարկուին հայ
հասարակութեան մէջ, արհամարհելով
չպիտի անցնիմ:

Թրքահայոց յեղափոխական ճիգե-
րուն մէջ ուսանայեալ գործակցելուն
գէտ խօսած չեմ. մանաւանդ կը վախ-
նամ որ առանց վերջիններու բոլորա-
նուէր օժանդակութեանը հայ յեղա-
փոխական շարժումները անյաջողու-
թեան պիտի դատապարտուին: Խնդիր
է սակայն, ինձի եւ ինձի պէս խոր-
հող շատերու համար թէ, այս մասով
եւ կենաց շարժումներու ղեկավար ու-
ղեակներ մէջ ի՞նչ եւ որքան ըլլալու է
առասանայեան գերը:

Յեղափոխական կազմին մէջ գիտա-
կից, ազնիւ ու բարոյական տարրեր
միայն առնելու մասին իմ խօսու-
թիւնը շատերը ծայրայեղ իսկ կը հա-
մարեն: Կրնայ մէկը արդեօք, նոյնիսկ
ծածկանունի տակ ապստամբութեամբ,
յայտնել հրապարակաւ այդ «տալան-
աւորներէն եւ անբարոյականներէն»
մէկ հատին անունը՝ որը ես կազմա-
կերպութեան մէջ առած ըլլամ:

Ժողովուրդը գիտէ սակայն թէ,
որքին տեսնելու է Արշակունիքը առ-
ջանաւորներուն, անբարոյականնե-
րուն, զրպարողներուն եւն. եւն.
եւ այլն:

Գ. Պ. ԶԻԹՃԵԱՆ

ԼՍԱՐԱՆ

Քանի մը շաբաթէ ի վեր քա-
ղաքս հիւր գտնուող երկու ազ-
գային գործիչները, Տ. Հմայեակ
Խուչպուլեան, եւ Տ. Գարեգին
Զիթմեան, հրկուշտի իրիկուն
Սանդղաւ սրահին մէջ բարեհաճե-
ցան ատենաբանել, բաւական հոծ
բազմութեան մը առջեւ: Սենկն.
գիւրները չափազանց գոհ մնալով
խնդրեցին պատուական հիւրերէն
որ բարեհաճին անգամ մը ալ ա-
ռիթ ընծայել վառնայի հայ հա-
սարակութեան զիրենք ունկնդրե-
լու:

Դոհուլթեամբ կը յայտարարենք
թէ յարգելի հիւրերը հաճութիւն
յայտնեցին մեզ կրկին տեսնաբա-
նելու վաղը (հինգշաբթի) իրիկուն:
Ուստի երկուսն հայ հասարակու-
թիւնը կրնայ առիթէն օգտուել
ժամը ճիշտ Սանդղաւ համախմբու-
լով:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Ինկիլիզ վէ թ/ւրք տեօվլէթ.
Էրի պէյնիտէ պիր վազըթտան
պէրու թահթը միւնազատու օ-
լան Ատէն մէսէլէսի ինկիլիզլէրին
թալէպի իւզրէ հալլ օլընտը. եանի
մէզքիւր զըթանըն տօգուզ գալա-
լարը Էնկիլիզլէրանըն հիմայէսինէ
թէքը իտիտիկինէ տայիր Սուլ-
թան պիր իրատէ իմզալմայա
մէհպուր օլտու: Սուլթան պու ի-
րատէի իմզալմամազ իչիւն ու-
զուն թէրէտտիւտտէ պուլընտը
իսէտէ, ինկիլիզ տէօվլէթին իս-
րարը վէ քէնտի վազիլէթին շու-
սըրա միւշէվլէշիկի անը մէհպու-
րիլէթ ալթընա գօյտու:

— Աւստրո-բուս պէյաննամէսի-
նին ահքեամը թէմէլ թուրքուա-
րազ՝ Պապը Ալինին հազըրլամազ-
տա օլտըրը իսլահաթ ճէտվէլի իք-
մալ օլընմըլ տըր: Շիմտի պու
ճէտվէլի Պապը Ալի նէշը իթմէ-
յուպ, եալընը Մաքէթոնիանըն
իւշ վիլայէթին տէ հայիէ իւն
իթիւրէճէք կէօրիւնիօր: Ճէտ
վէլտէն պիրէր նուսխէ տալի իքի
էլիլէրէ թէֆհիմ օլընմըլ տըր:

— Նուշօ թաւն կազէթանըն
մուսպիլի բուս էլիսի Ս. Զինո-
վիէվ իլէ պիր միւլազաթտա
պուլընմըլ օլուպ, էլիլ տէմիշ
տիր:

«Սուլթան, սատրազամ Ֆէրիտ
բաշա վէ ուսուլ միւլթէթիւշ հիւլի
բաշա Մաքէթոնիատա իսլահա-
թըն իճրասընա գարար վէրմիշէր
տիր: պէօրիւք տէօվլէթլէրտէն
հիշ պիրի պուսնա մանի օլմայա-
ճազ, վէ Պուլկարիա՝ Բէթլուս.
պուրկտան ալտըրը իլթիւրաթ
իւզրէ՝ քիւլիէն միւլթազը գալ-
մըլ տըր:

«Պապաթ Ֆէր Մաքէթոնիալը-
լար ըսեան իտէրսէլէր» սօրտու
կազէթաճը, էլիլ անա շու ճէվա-
պը վէրտի: «Լազըմ թիւրքիա իս-
լահաթը իճրա իլթիւն վէ տէօվ-
լէթլէր պու իճրաթա նէզարէթ
իտէճէլէր, Բուսիա իսէ պիր տա-
լա գան տէօքմէյէճէք տիր»: Վէ
կազէթաճը իւլպէ իլթի: «Օ վա-
զըթ թիւրքիա ըսեանը գապթ
ու թէսպիր իլթմէյէ հազըր օլա-
ճազ մը տըր» — Թապիլի, տէտի
էլիլ:

Նիհայէթ Ս. Զինովիէվ միւ-
րիւլթմէյէ շու սէօլլէ իլթիմ
վէրտի: «Շու ահվալըն միւշքիւ-
լաթը էն զիյատէ Արնապուտար-
տա տըր: պուլար իսլահաթա
գարըն ըսեանա գալըրըլօրլար»:

Թիւրքիա վէ ԵՈՒՆԱՆԻՍՏԱՆ

Շու սըրա Սուլթան վէ Եունա
նիստան պէյնիտէ հասըլ օլան
տօթլըրըն սէմէրէսի օլարազ,
թիւրքիա ահիւսմէսինին թան:

զիմիւնէն մատա, պաշգա պիր
գաշ մուհասէնաթ տալի Եունան.
լըլար էլտէ իլթմիշէր տիր: Եանի՝
Սուլթան բուս Բաթրիգի Ամեն.
Եունակիմէ պա իրատէ ալթիւթի
իլթիազաթը վէրմէք վաթ իլթմիշ
տիր:

1) Մաքէթոնիատա ելէնի բուս
մէքթէպլէրի թէսիս իլթմէք, վէ
պուլտան էվլէլ՝ Պուլկար էքսար.
քըն թալէպի իւզրէ՝ գարանմըլ օ-
լան բուս քիլիսէլէրին ելէնիտէն
աշմազ իլթիազը վէրմէք:

2) Պիր չօք բուս մէքթէպլէրին
րէսմէն թանըմասըն վէ սէրպէս-
տիլէթի թամմէ իլէ տէվաթ իլթ-
մէլէրին իրատէ էյլէյէճէք:

3) Բուս միւլթէրիլէրին վէ բա-
րապարըն քէնտի քէօլլէրինտէ
միւլթազ վէ սէրպէսթ օլմալարըն
էմր ու թափօյլէ էյլէյէճէք:

4) Բուս բաթրիգհանէնին, քի-
լիսէլէրին վէ մանաստըրլարըն էմ-
լաք վէ վարիտաթլարընը բէսմէն
թանըմազ, վէ սայիր գազը իմ-
թիազաթ վէ պէրաթլար վէրմէք:

Սուլթանտան բուսլարըն լէհիւն
օլան շու վատարա մուգապիլ Եու-
նանիստան վէ Բաթրիգհանէ տա-
լի Սուլարա վէ խուսուսի իլէ
Պուլկարլարա գարըն թիւրք տէօվ-
լէթլէրին մէնաֆիսինէ խըտմէթ ի-
տէճէքլէր տիր: Զաննիլաթա կէօ-
րէ, սօնու սօնու պու մուհասպէթ.
Եունան-թիւրք իլթիլթիւքընա
միւնէճէր օլաճազ կէօրիւնիօր:

ՏԱԽԻԼԻՅԷ

Վիւքէլա բէյի Ս. Տանէվսօն
կիւնէրտէ Ժոշընալըն մուսպիլի
իլէ կէօրիւշմէսինտէ չէօլլէ պէյանը
հալ իլթմիշ տիր: «Պիլ սօն տէ-
րէճէ սէպաթ կէօլթէրէճէկիլ վէ
շիւքէլի հարէքեաթտան սազըն-
ճազ իչիւն հէր պիր թէտպիլտէ
պուլընաճազը, էվէր հէր քէս
(հէր տէօվլէթ) պիլիմ կիպի ազի-
լանէ տափրանաճազ օլու իսէ
սուլհ իլթալ օլընմայաճազ տըր»:

— Մաքէթոնիա գօմիլթէսինին
գապիլէր Ս. Պէլէվ Բօօլադտա
տէրտէսթ օլընուպ Սօֆիայա նազլ
օլընմըլ տըր: օրատա շիմտիլթ
խանէսինտէ թէվզըթ պուլընյօր:

— Սիւհըր 1/4 մաքէթոնիալը-
լար թիւրք սինօրընա կէշմէք հա-
լըրըլընտա պուլընտըլարըն ի-
չիւն թուրքուպ Պուլկարիանըն
իչիլլէրին սիւրիւլտիլէր:

— Սօն սէնտէ Պուլկարիատան
խալիլէ կիտէն թիւթիւնէր ֆի-
լալըն սաթլըմըլ օլտըրընտան,
հիւքիւլթ թիւթիւն զըրաթը
արլըրմազ իչիւն՝ քէօլլիլէրէ
մէճանէն թօլսուս տազըլթմազտա
տըր:

— Ուպըզ վիւքէլատտն Բատա-
լափօլ վէ բէթէգալընը մուհաթէմէ
իտէն Մահմէթի Ֆէվզէլատէտէ
շահիտլէրին իլթիմասընը վէ միւլթ-
թէհիւլէրտէն թազտիմ օլընան էվ-
րազըն գրաթընը պիլիլթմիշ օ-

լուպ, բէրէնպէ կիւնիւնտէն պէ-
րու 1900տէ սաթըն ալընան էսկի
վափօնլարըն մէսէլէսի իլէ մէշըլլ
պուլընյօր:

— Ֆրանսըզ, ինկիլիզ վէ տլման
կազէթա մուսպիլլէրի կէշէն հաթ.
թա Սօֆիա թարիգի իլէ Մաքէ-
թոնիայա կէշմիշէր: Շու թէլաշ
իլէրիսի իչիւն մէսէլէսին էհէմ-
միլէթ քէսպ իտէճէկին կէօլթէ-
րիլ:

ԷՐՄԵՆԻ ՄԷՍԷԼԷՍԻ ԷՎՐՕԲԱՍՍՈ

Մաքէթոնիա մէսէլէսինին էվ-
րօքա տէօվլէթլէրին իշլալ իլթտի-
կի շու էսնալարտա, էրմէնիլէրին
հալիլի տալի էնզարը ումուլիլէ
վազ իլթմէք վէ իսլահաթը էրմէնի
վիլայէթլէրինտէ տալի իճրա իլթ-
տիրմէք մաքսէտի իլէ իպրազ օ-
լընան զայրէթ մուճիպի մէսէլէթ-
տիր:

Ֆրանսատա, Ալմանիատա վէ
Զուլիցէրիատա լէճէմմիւ օլընան
միլթիլլէրտէն մատա, Պէլիգա-
նըն բաթլաթլը օլան Պրոգուշ
չէհիւնտէ տալի կէշէն կիւն պի-
լիմ մէսէլէ իչիւն պիր միլթիլլ
լէճէմմիւ իլթմիշ տիր: իշլալ մի-
լթիլլտէ մէճիսի մէպուսան ազա-
լարընտան Ս. Հէթթօր Տընի վէ
Ս. Էմիլ վանտիլլէտ իրատը
նուլթ Իտէրէք, թիւրք իտարէ-
սինին զատտարլըզլարըն վէ էվրօ-
քա տիւրօմաթլարըն սիւքիւտ
գալմալարըն իլէ շէրէթի ճիւնյէթ
օլտըլարընը իշլահ իտուպ, շէտի-
տէն բօլթէսթ իլթմիշէր տիր:
Սիլթիլլ Բաթրիգտէրի միլթիլլին
գարարընը գապուլ իլթմիշ տիր:
Եանի Մաքէթոնիա իլէ պէրապէր
էրմէնիատան իսլահաթըն իճրա.
սընը տէօվլէթլէրտէն իտատա էյ-
լէմիշ տիր:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԷԼԷԿՐԱՖԻԱ

Սրանպօլ, 22 Մարտ

Բարիկ էլիսի Սիւնիլ պէյ՝ իյ-
ֆա իլթմիշ օլտըրը խըտմէթլէրէ
միւքէնաթաթ օլմազ իւզրէ, վէ-
զիլիլթ բուլթպէսինէ վէ «բուշա»
իւնվանընա նայիլ օլտու:

Սրանպօլ, 22 Մարտ

Ենի պուլկար շէթլէրի Բէթ-
րիշտէ (Սէլանիք վիլայէթի) վէ
իսթիպաթ (Սքիւպ) ըսպաթը վի-
ճուտ իլթիլէր:

ԹԱՏՐԻՆ «ՍԱՆԻՐԱԼ»

1903 Մարտ 16 կիրակի գիշեր պի-
տի Ներկայացուելի՝ ՎԱՍԻԼԵՍԻ խմբին
կողմէ անապնորդութեամբ Տկն. Մանի
Իսկալաբէլիօր՝ ՖՕՄԻԱՐՕ, եղերիլթ
6 արարտա, խիստ ծիծաղաշարժ
կատակերգութիւն մը, պարեր եւ եր-
գեր:

Одговорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна